# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**01 հունիսի 2017 թվականի N 111-Ա**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1790-Ն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետի և *Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների միջոցով իրականացվող աշխատանքների համակարգման նպատակով* **որոշում եմ.**

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալների կողմից Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործունեության հետևյալ համակարգումը.

1) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Կարեն Մարգարյան.*

ա. *կրթության, մշակույթի և սպորտի վարչություն,*

բ. *առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն (առողջապահության բնագավառին վերաբերվող գործառույթների մասով),*

գ. *ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին,*

դ. *տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին,*

2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Համլետ Հայրապետյան.*

ա. *գյուղատնտեսության և բնապահպանության վարչություն,*

բ. *տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն (արտակարգ իրավիճակների, քաղաքացիական պաշտպանության և զինապարտության բնագավառներին վերաբերվող գործառույթների մասով),*

գ. *զորահավաքային նախապատրաստության բաժին,*

3) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ *Մուշեղ Մանասյան.*

ա. *քաղաքաշինության վարչություն,*

բ. *տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչություն,*

գ. *զարգացման ծրագրերի և վերլուծության բաժին:*

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալներին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1790-Ն որոշման 3-րդ կետի «ա» ենթակետով հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետով նախատեսված գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշման 1-ին կետում չնշված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների *(ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն, առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն (սոցիալական ապահովության բնագավառին վերաբերվող գործառույթների մասով), քարտուղարություն, իրավաբանական բաժին, հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչություն, անձնակազմի կառավարման բաժին, ներքին աուդիտի բաժին, Աբովյանի, Հրազդանի, Չարենցավանի և Եղվարդի սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ)* գործունեության համակարգում չի սահմանվում:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2016 թվականի ապրիլի 25-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների գործունեությունը Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալների կողմից համակարգելու մասին»* N 112-Ա որոշումը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2017 թվականի հունիսի 01**
**ք. Հրազդան**